# Դաս 17. Ավանդույթներ, ծեսեր, եկեղեցական տոներ (Սուրբ Ծնունդ, Սուրբ Սարգիս)

- *Մինչև 20-րդ դ. սկիզբը, Խաչվերաց տոնը, որը կենցաղում տարածված էր Սփխեչ կամ Սըբխեչ անվամբ, ուներ նաև այլ անվանումներ՝ Խչվերաց, Ուլոց (Ուլնոց), Խրով, Խաչեյն Ջաղաց և այլն:*
- *Խաչվերացի տոնին կազմակերպվում էին ուխտագնացություններ: Յուրաքանչյուր բնակավայր ուներ տոնին նվիրված իր ուխտավայրը: Տոնի նշանավոր ուխտավայրերից է Վայոց ձորում գտնվող Արկազի Սուրբ Խաչ եկեղեցին:*
- *Վասպուրականում տարածված էր այդ օրվա կապակցությամբ փայնաքեոշ (համեմով հաց) թխելու և այն աղքատներին բաժանելու սովորույթը, իսկ մուսալեռցիները հարիսա էին պատրաստում:*